

# Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## **Խորհրդի հիմնական նպատակները՝**

- նպաստել մտավոր արտադրության գլոբալ տնտեսության մեջ Հայաստանի ներգրավմանը,
- տնտեսական առաջընթաց և բարեկեցության աճ ապահովող տեղեկատվական տեխնոլոգիաների հզոր և կենսունակ ոլորտի ձևավորմանը,
- Հայաստանի Հանրապետությունում բարձր զարգացած տեղեկատվական հասարակության ձևավորմանը:

## **Խորհրդի խնդիրներն են՝**

- տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում կյանքի բոլոր ոլորտներում,
- կայուն և գործունեության համար նպաստավոր օրենսդրական դաշտի ձևավորում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների մասսայականացում,
- Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված գիտության, կրթության և արդյունաբերության վերածումը համաշխարհային շուկայում մրցունակ և ներդրումների համար բարենպաստ ոլորտի,
- գործարարության և նորարարության, որպես տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերի խթանում,
- առկա և նոր տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների աշխատանքի արդյունավետության բարձրացում և նրանց Հայաստանից չհեռանալուն նպաստող միջոցառումների իրականացում:

## **Խորհուրդը**

- աջակցում և նպաստում է ներդրումներին և գործարարությանը խոչընդոտող վարչարարական արգելքների վերացմանը,
- աջակցում է գործարարների կողմից բարձրացված հարցադրումների և խնդիրների լուծմանը,
- ստեղծում է աշխատանքային խմբեր՝ խորհրդի որոշումների իրականացման, նիստերի միջև ընկած ժամանակահատվածում խորհրդի ընթացիկ գործերի կատարման համար,
- քննարկում և հաստատում է աշխատանքային խմբերի գործունեության արդյունքները,
- սահմանված կարգով առաջարկություններ և օրենսդրական նախաձեռնություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին վերաբերող օրենսդրության վերաբերյալ,
- օժանդակում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը երկրի տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքականության մշակման հարցում,
- հանդես է գալիս որպես միջանկյալ օղակ պետական մարմինների և գործարարների միջև: